ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1709 07.06.2017թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիսի 31-ին Դիտորդական խումբը հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ՁՊՎ արձանագրեց մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Ընդհանուր ՁՊՎ –ի խցերը գտնվում էին փոշոտ վիճակում:
2. Կոտայքի ՁՊՎ-ում չնայած իր մեծ չափերի՝ բուժսենյակը, տեսակցության սենյակը և քննչական սենյակը տեղակայված են 2 սենյակներում: Օրինակ՝ եթե ՁՊՎ-ում իրականացվում է քննչական գործողություն, ապա ո՛չ տեսակցություն կարելի է կազմակերպել և ո՛չ էլ բուժօգնություն տրամադրել ՁՊՎ-ում գտնվող այլ անձի:
3. Ընդհանուր բուժսենյակը և քննչական սենյակը գտնվում էին կեղտոտ վիճակում:
4. Զուգարանը գտնվում էր կեղտոտ վիճակում, տհաճ հոտը տարածվել էր ամբողջ ՁՊՎ-ում:
5. 2-րդ խցում սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ, օգտագործված վիճակում, այն դեպքում, երբ այցելությունից 2 օր առաջ էր այդ խցում մարդ եղել: Աղբամանը նույնպես չէր մաքրվել: Կարելի է համոզված ասել, որ արդեն շուրջ 2 օր էր ՁՊՎ-ում մաքրություն չէր կատարվել:

ՀՀ ոստիկանության 2821
03 06 17

Խախտումներ՝

1. <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում արգելանքի վերցնելու ժամերը չեն նշվում , նշվում են միայն ՁՊՎ ընդունելու ժամը: Արդյունքում՝ հնարավոր չէ արգելանքի տակ պահելու 72 ժամը հաշվարկել և պարզել՝ խախտվել է ՁՊՎ-ում պահվող անձի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքը թե ոչ:

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀՀ ոստիկանության
մուտքագրված 3891
«09» 06 2017թ.

2. <<ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում նշվում է թե անձը երբ է տեղափոխվել դատարան խափանման միջոցի հարցը քննարկելու նպատակով:

Որոշ դեպքերում նշվում է

- ✓ անձը ազատ է արձակվել դատարանի որոշումով, նշենք, որ խափանման միջոցը քննարկելուց դատարանը անձին ազատ արձակելու հարցը չի քննարկում, այլ խափանման միջոցի հարցն է քննարկում և ազատ արձակելու որոշումը կայացնում է վարույթն իրականացնող մարմինը: Խնդրում ենք ուշադրություն դարձնել տվյալ անձանց անձնական գործերի, ազատ արձակման որոշումների վրա:
- ✓ Գրանցամատյանում չի նշվում անձանց ազատ արձակելու ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը: Միայն գրվում է, որ X օրը, X ժամին տեղափոխվել է դատարան և հաջորդիվ ազատ է արձակվել դատարանի որոշումով, առանց օր և ժամ նշելու:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Ս.Իսկանդարյան

ՀՀք.Երևան 0033,Բաղրամյան 79/45
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 2/2-1-2092 «20» 06 2017թ.

Ձեր 07.06.2017թ. թիվ 2621/1709 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Ս. Իսկանդարյանին

Հարգելի պարոն Իսկանդարյան

Դիտորդների խմբի կողմից 2017թ. մայիսի 31-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Կոտայքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

Ծառայողական քննության ընթացքում հիմնավորվել է դիտորդների խմբի կողմից արձանագրված թերություններն ու խախտումներն, ինչի համար ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի հետթապահ մասի պետը, ավագ տեսուչ-հերթապահը և ՁՊՎ ոստիկաններն ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված թերությունները վերացվել են, իսկ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը լրացվում է սունյակների պահանջների համապատասխան:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ի բուժզննության, տեսակցության և քննչական սենյակների համատեղված լինելուն, ապա դա պայմանավորված է ոստիկանության Կոտայքի բաժնի վարչական շենքի կառուցվածքային առանձնահատկությունով, սակայն այդ հանգամանքը խոչընդոտ չի հանդիսանում ՁՊՎ-ում պահվող անձանց պատշաճ ձևով բուժզննություն իրականացնելու և տեսակցություն տրամադրելու գործընթացին: Ապագայում նախատեսվում է հիշյալ բաժնի ՁՊՎ-ի կապիտալ վերանորոգում, որի ընթացքում կանդրադարձվի նաև այդ հանգամանքին:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ